

ՄԵՐ ԿԱՄՔԸ ԱՐՏԱՅԱՅՏԵՆՔ ՄԵՐ ՔՈՒԷՈՎ

Իսկ Ժուլյայի մէջ, Ազգային Պրօ կուսակցութենէն
հեռացուած Ժան Հաուարթ երկէ հրապարակեց իր գլխա-
ւորած ցանկը, որուն մաս կը կազմեն Պութրոս Հաշմ
եւ Երեսիոսան Մահմուտ Աուաւ:

Միտն կողմէ, ներքին դրժող նախարարութեան ընդհանուր տօնօրէնքի երկ Հրապարակեց Հրամանագիր մի յիշեցնելու Համար, որ Լեռնայիրանանի մէջ երեսփոխանութեան թեկնածուն ներկայանալու ժամակէտը կ'աւարտի վաղը՝ կէս գիշերին: Իսկ անոնք, որոնք կ'ուզեն ետ քաշել իրենց թեկնածութիւնը, պէտք է Համապատասխան գրաւոր յայտարարութիւն ներկայացնեն մինչեւ 7 Օգոստոս:

Մահա Ասաատի հետ

ԲԱՆԱԿԻՆ ԸԱՆՈՒՄ ԿԱՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԵՄԻՍԻՅԵԼ ՈՒ ԻՄՐԱՅԵԼԻ ՓՈՐՁԸ ՉԱՆՈՂԱՆ

ու Սուրբաճան իրարմէ հե-
ռացնելն է: «Հարաւէն քաջ
ւելլու մասին Իսրայէլի
մէջ տեղի ունեացած պաշտօն-
ւոր հին խաղ մըն է, որուն
մէջ պիտի չիյնանք», շեշ-
տեց Հահուտ:

ՀԱՐԻՐԻ - ՌՈՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հարիրի անդիպումներ ունեցաւ ևս եւ Երոզյա-
կան համալսելի տատարական տուներուն հետ, քնն-
նարկելով խորորդատու լատուկ մարմինի կազմու-
թեան հարցը: Մանօթ է, որ միջազգային այս մաթե-
միկն ունի զբաղի Լիբանանի վերաշինութեան
ծրագրները կազմելով եւ անոնց համար ունի
առաջնութեւն իւր իւրական աղբիւրները: Վարչապետը
Պրիւքսէիտեան անցաւ Իբրանական, պաշտօնական եր-
կօրեայ ալցեշնութեան մը համար:

Անկա կ'աւելցնէ, որ իսրայէլեան ուժերու հեռացման մ'իակ գրաւականը Լիբանանի յանձնառութիւնն է խաղաղութեան գործընթացի:


Սֆէյր թեկնածու է Քեսրուանէն եւ մաս կը կազմէ
Ֆարէս Պուէյզի ցանկին:

ՀԱՅՏԱԿԱՆ
ԲՈՒԼՈՒՄՆԵՐ

քու քու

«ՏԻՆԲ»

Զարաթի մեջ կայացած
ժողովրդական խորհուրդի 1. ՍՍՐՄ-ի Ժողովուրդ
կը խօսի
Ընկ. Կարո Յովհաննեսյան
Այսօր չի գշաբթի. 1 Օգոստոս 1996,
Երեկոյան ժամը 8.30ին:



ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՋ ՏՐՈՒԱԾ ԽՕՍՔԸ ՄԻՇՏ ԿԸ ՅԱՐԳՈՒՒ

1964ի երեսփոխանական ընտրություններուն աւարտին, ֆրանսատառ «*Լ'Օրիան - Լը ժուր*» օրաթերթի թղթակիցներէն Էլիան Օպարաւտորագրած է յօդուած մը, որուն մէջ ան կը նկարագրէ ընտրութիւններուն ընթացքին Պուրճ Համուտի մէջ եղած եռուկեռը, որ արդիւնք էր Հայ համայնքին քուէարկելու յանձնառութեան եւ համուկումին։

Էլիան Օպարաւտի յօդուածը օրին թարգմանաբար լոյս տեսած է «Այդակ»ի էջերուն մէջ։ Այսօր այդ յօդուածը կ'արտատպէ մեր ընթերցողներուն յիշեցնելու համար 1964ի խանդավառութիւնը, որ իր քաղաքացիական իրաւունքներուն տէր կանգնելու Հայ համայնքին անկիջողութեան արտացոլացումը եղաւ։

Եւ երբ այսօր կը գտնուինք 1996ի ընտրութիւններուն նախօրեակին, յիշեցումի կարգով կ'արժէ յետադարձ ակնարկ մը նետել անցեալին վրայ եւ դասեր քաղել նախկին փորձառութիւններէն։ 1964ին միահամուռ պատասխան մը տուինք բոլոր անոնց, որոնք փորձեցին նսեմացնել Հայ համայնքին կարողութիւնը։ 1996ին այլ պատասխան չունինք, քացի ներկայաւալ քուէատուփ եւ քուէարկել։ Անկէ ետք ամէն ոք կը ստանայ իր պատասխանը։

Տեսարանի ամբողջական փոփոխութիւն Պուրճ Համուտի մէջ։ Վերը՝ Մերն (բացի Բանի մը գիւղերէ, ինչպէս՝ Պէյք Տապապ, Պիլֆայա եւ Տեւր Տուէյք) գիւրաւ կարելի էր կրքեկեկ ժամական 80 Բժ. արագութեամբ։ Հոս՝ այս քաղք կարծէկ գործարանի մը մէջ կը գտնուէր։ Բազմօրէյուն խոռոհներով էր, ամէն կողմ՝ շարժում, լինէմա՝ շարժի նշակ, գարշաղթալի։ Եւ սակայն ջախջախել մեծամասնութիւնը (Բուէարկողներու 97 առ հարիւրը) կը բուէարկէ կառավարութեան, այսինքն՝ ժեմիւ կառուէ՝ Մուրիս ժրմակէ - խալիկ Ապի ժուտե - Միշէյ Մրր ցանկին, ու բնակամարտ իր մարդուն՝ Անար, Թապուրեանի։

«Յանկին մէջ փոփոխութիւններ եղաւ», հարցնուցի Դաշնակ Կուսակցութեան ղեկավարներէն մէկուն։ Ապրիլեան երեսն ցայեցաւ։ «Մեկն երբեք՝ փոփոխութիւն չենէր ընկեր։ Ամբողջ ցանկէն է, որ կ'իջնէ Բուէաւուժ»։ «Նոյնի՞նք կը իրարմէն մը կամ քարեցործ մը ունի՞մք միւս ցանկին մէջ»։ պնդեցի։ «Տես, օրինակ, Սեյիմ Լալուտ եւ է, որ գիւս մտնուէ կըրանի, ուր կ'աշխատիմք։ Երաւ խորհուրդի նպատակաւ, եւ սակայն իրեն դէմ կը Բուէարկեմք», պատասխանեց կապաւորեալը։

«Ինչո՞ւ միշտ կառավարութեան ի նպաստ կը Բուէարկէլէ»։

«Կրսեմ, քէ, մեկն կառավարական ենէր իրականութեան մէջ մեկն երկրի քաղաւանման եւ անկախութեան ի նպաստ ենէր, ու երէ ասիկա կը գործադրուի իշխանութեան հետ... Մեկն, կը հասկնամ, մեկն մեր սկզբունքներուն հաւատարմեմք ենէր, գլխեմք արժէք անկախութեան, որուն համար պայմարած ենէր միշտ»։

«Ինչպէ՞ս կը բացատրէլ Բուէարկողներու այս գանգուածը»։

«Նոյն» արտով մեկն կապուած ենէր գաղափարաբանութեան. մեկը՝ համարատիկա մտնուէ կենցաղ խնդիր է։

«Ու» կարգադատութեամբ։ Ունիմք ցանկը Պուրճ Համուտի բոլոր բնակիչներուն եւ այն հաշիւուն, որոնք հոն կը Բուէարկեն, բայց կը բնակին Ջոնալ Գլաք, Գարաւիլեմ, Գարաւ Զէյրուն։ Եւ բաւանջիւր փողոց ունի իր փոքր յանձնախումբը, կազմում՝ երկու կամ երեք անձերէ, որոնք կ'արձանագրեն իւրաքանչիւր շէմք, իւրաքանչիւր բնակիչի եւ անոր բաղաձայնակ հաշիւը։

«Այս փոքր յանձնախումբը իրենց տեղեկագիրը կը փոխանցեն քաղապետին, որ իր կարգին, նու իրապետական կարգով, կը հասցնէ կուսակցութեան։

«Ընտրութիւններու ընթացքին այս նոյն յանձնախումբը կը գրադին Պուրճ Համուտեմ, ուր քանակաւ արձանագրուած ենէր, զանոնք կ'ընդունին եւ կը որինքն այն Բուէարկուիք, ուր պիտի Բուէարկեն...»

«Ուստի, փոքր պոռոյտ մըն է, որ կ'ընէ մեր Բուէարկողը»։

Ինչ որ ընդհանրապէս կը պակսի լիբանանցի Բուէարկողին՝ կուսակցական կարգադատութիւնը։ Հայ համայնքի Բուէարկողները ունին։ Ձարմանալի չէ՞ միքէ, որ նիշով ստոր համար կը մեղադրեն գլխեմք։

Ժամը տասնութն է։ Մոփախարութիւններ։ Խալիկ Ապի ժուտե, Անար, Թապուրեան եւ Նարի Լաւուտ (հօրը՝ գորավար Լաւուտի երկրպագու իշխը) կու գան կաշուիներ լնկնուէ։ Անկողը Է. Պուրճ Համուտ չի պատանկեր արում Խոսէին։

ՀՐԱՇՔ ՊԱՏԱՆԻՆ

14ԱՄԵԱՅ ՀԱՆՆԷՍ ՍԱՐԶՈՒՆԻ ՊԱՏՈՒՈՅ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՄԲ Կ'ԱՒԱՐՏԷ ՀԱՄԱՍԱՐԱՆԸ

Մայիս 16ի երեկոյեան, Նիւ Ճորջիի Ռաթկորգ Համալսարանին մէջ կը կայանար շրջաւարտներու վկայականներու բաշխման 230րդ տուէրութիւնը։ Սակայն 9593 շրջանաւարտներու մէջէն, երբ յայտարարեցաւ Հաննէս Սարգսնիի անունը, ներկաները յոտորկայա եւ որոտընդոտ ծափերով դիմաւորեցին 14ամեայ Հայագի պատանին։ Արարողութենէն ետք, թղթակիցներու եւ հեռաւիսի կայաններու նկարահանողներու բանակով շրջապատուած, Հայագի պատանին կը յայտնէր։ «Պատահածին հանդէպ տրամադրուած եմ յաւըգագացումներով, սակայն 14 տարեկանիս ձեռքբերած այս քայլս չէ որ իմամբողջ ուշադրութիւնս գրաւած է, պարգապէս ուրախ եմ որ շրջանաւարտ եմ»։

Հաննէս Սարգսնի, գաւակը Լիբանանի Այնճար հայաւանէն Միացեալ Նահանգներ Հաստատուած ծնողներու, 1994ին Քրէնպերի միջնակարգ վար-



ժարանի շրջանաւարտից իր հանդէսէն մի քանի օր առաջ, արդէն կը կայացրէ իր որոշումը, միջնակարգ վարժարանի ծրագրից դասարանէն «ցատկել» դէպի Համալսարան։

Անդրադառնալով գաւակին միջնակարգ վարժարանի օրերուն, մայրը՝ տիկին Ջուլիա Սարգսնի կը յայտնէ, թէ դասընթացներու առթած ծանձրոյթը Հաննէսի մօտ, իր գագաթնակէտին հասած էր, որով հետեւ ոչ մէկ տրիպի դաս կը գոհացէր Հաննէսի

«Մտային աշխարհ»ը։ Հայրը՝ Սարգիս Սարգսնի, մրտահոգ այս կացութենէն, կը դիմէ Ռաթկորգ Համալսարանի դասախոսներէն կարողութիւնները փորձեն համալսարանական մակարդակի վրայ։ Պրն. Մուրիւր առաջին քայլ, պատահալ Հաննէսին կը մղէ որ հետեւի ուսողութեան դասընթացներու։ Կարծ ժամանակ ետք, Հաննէս կը

ՊՆԴԵՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷՄ ԿԱՆԽԵԼ

Սրտանօթային արկածներու գլխաւոր պատճառներէն էր կը մնան՝ ծխամոլութիւնը, արեան զերծնշումը, գիրութիւնը, շաքարախտը, արեան ճարպային նիւթը, որ բարձր տոկոսը, հոգեկան տագնապները եւ ժառանգական նախադրամագրութիւնը։

Գլխաւորն էր իժկական փորձառութիւններով ստուգուած է, որ վերոյիշեալները, մասնաւորաբար արեան ճարպային նիւթը, որ բարձր տոկոսը, կը նուագեցնեն երակներու տրամագիծն ու առաձգականութիւնը, յառաջ կը բերեն երակներու կարծրացում, այսինքն՝ պնդեցութիւն, պատճառ դառնալով ուղեղային, սրտանօթային եւ երկամբներու արկածներու, մասնաւորաբար՝ 45էն 55 տարեկանին։

Յստակ է եւ ապացուցուած, որ ներկայիս արեան ճարպային նիւթը որոշ տեսակներու բարձր տոկոսը սրտի կարմրեղաններուն կանխահաս կարծրացում կը պատճառեն, նախապայմաններ կը ստեղծեն եւ սրտի կաթնուած կը յառաջացնեն։

Ճարպութեամբ արեան յատուկ քննութիւնը յատկաւորէն կը յայտնաբերէ ճարպային աշխատանքները, որոնք պատճառ կրնան դառնալ ընդհանուր ձեւով պնդեցութեան եւ մասնաւորաբար սրտի կաթնուածի։

Կրնան պատահել պարագայներ, երբ անհատին մար-

մինը եւ ժառանգականութիւնը արեան մէջ ճարպային նիւթը բարձր տոկոս կը պահեն, հակառակ որ անհատը չէ, սննդականոնի կը հետեւի եւ չի խնայ։ Այս պարագային իժկը, յետ ուսումնասիրութեան, կը դիմէ յատուկ դեղերու։

Արեան ճարպային նիւթը բարձր տոկոսին դիմաց իժկ-հիւանդ-ընտանիք անյապաղ պէտք է գործադրի ենթակրկին։ Իժկը, յետ հիւանդին առողջական ընդհանուր վիճակի ուսումնասիրութեան, կը փորձէ նաեւ ընդհանուր ձեւով սրտայրել արեան ճարպակալումը։ Ուտեղիքներու ցանկագրութիւն՝ գանց առեւելով պնասակար ճարպը պարունակողները, մասնաւոր՝ սննդականոն մը, ուր ենթակալէն խոտորէն կը պահանջուի ըլլալ սակաւակեր, ճիգ չխնայել նուագեցնելու կշիռը... մէկ խոտորով՝ քանակ նիւթաւոր։

Հետեւողական այցելութիւններով ենթական առիթ կու տայ իժկին, որ ան յաջողի նուագեցնել եւ բնական քանակի հասցնել արեան ճարպային նիւթը, որոնք մասնաւորաբար՝ սրտանօթային կարմրեղաններու համար փառաշք ներկայացնող տեսակները։

Երբ անյաջող անցնի իժկ-հիւանդ-ընտանիք գործակցութիւնը, ենթական իժկը թեթալ ընդհանուր յատուկ դեղահատերով, որոնց արդիւնքը պէտք է ստուգուի արեան յաջողական քննութիւններով։

Ձեռն բաւել, սակայն, սննդականոնի եւ ճարպի զէմ դեղերու գործածութիւնը՝ խնայելու կենսական օրկաններու կարմրեղաններու տրամագիծն ու առաձգականութիւնը։

Պէտք է սրտայրել առողջութեան սպառնալիք հանդիսացող միւս թերիները։

Միւստեղութիւն, արեան բարձր ճնշում, շաքարախտ, գիրութիւն... Մասնաւորաբար՝ բոլոր անոնք, որոնք ընտանեկան կապերով հալածու են. օրինակ, երբ ծնողներէն կամ Հարազատներէն մէկը կանխահասօրէն արկածահար եղած է սրտանօթային հիւանդութեամբ մը...

Պէտք է մոռնալ, սակայն, որ հոգեկան դերընկճուած վիճակ մը, ընկերային, ընտանեկան կամ աշխատանքային անապատութիւններու տարողները պէտք է խորհրդակցին իրենց ընտանեկան իժկին հետ ու փորձեն սրտայրել սրտանօթային դրութեան սպառնացող փառնները։

Պնդեղականութիւնը բնական վիճակ մըն է, որուն կը հասնին մարդիկ տարիքի յառաջացումով։ Սակայն անհատին պարտականութիւնն է կանխել, կարելի եղածին չափ յետաձգել եւ ուշացնել անոր տեղադրումը մեր սրտին, ուղեղին, երկամբներուն կարմրեղաններուն վրայ՝ իր անձին ու ընտանիքին խնայելու համար բարդութիւններ եւ արկածներ։

ՏՈՔԹ. ԶԱՔԱՐ ՄԿՐԵԱՆ

ԸՍՏ - ԶԱՄԱՆԻ

ԷՐՊԱՔԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊԻՏԻ ԽՈՉԸԵՐՈՏԷ ԱՐՑԱԽԻ ԼՈՒԾՄԱՆ ՃԻԳԵՐԸ

Թրքական «Համան» օրաթերթը, վկայակոչելով «Թրքիշ Տէլէի Նիուզ» թերթի աղբիւրները, կը տեղեկացնէ, որ Հայաստան վարչապետ Նեմէտտալի Էրալ-Բալի օրով դժուարութիւններ կը տեսնէ Արցախի սահմանային լուծման նպատակով։

«Համան»-ի համաձայն, Ռաշիդ ըլլի մէջ հարցաւորուցի մը ժամանակ Հայաստանի նախագահին գլխաւոր խորհրդակցական ժողովը Լիպարիտեան յայտարարած է, որ Էրալ-Բալի խիստ ընթացք պիտի որդեգրէ Արցախի խնդրին նկատմամբ՝ ընտրողները սերտաշունչութեամբ։

Լիպարիտեանի համաձայն, Էրալ-Բալի նկատել կը կանգնէ Արցախի նկատմամբ իր դժուարութիւնները կը ստեղծէ ընտանեկան գործընթացին մէջ։ Անոր կարծիքով, որի եւ լուծ փոփոխութիւն չի սպասուիր Թուրքիա արտաքին Բաղաձայնութեան մէջ։ Ան նշած է, որ վերջին շրջանին Անգարա աւելի ակտիւմակալ կեցումով Էրալ-Բալի, Արցախի խնդրին նկատմամբ։ Սակայն ապագային խնդրին կը խոստանան իրենց դիմաւորելու, եւ սակայն, որ Թուրքիա ակտիւմակալութեամբ կ'աշխատի իրենց»։ Ըսած է Լիպարիտեան։

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Լ.Ղ.Հ. պետական վարչութեան պետ Լենտոն Զուրեան տեղեկացուց, որ Լ.Ղ.Հ. ընդհանուր ձեւերու եւ մարդասիրական օգնութեան հարցերով գրադող պետական վարչութեան կողմէ մշակուած է նոր ծրագիր մը, որուն նպատակն է լուծել այլ երկիրներէ Լ.Ղ.Հ. հաստատուողներու բնակեցման հետ առնչուող հարցերը՝ միաժամանակ նկատի ունենալով վերաբնակողներուն բնակարան ապահովելու հարցը եւ պետական միջոցներով անոնց տուններուն վերականգնումը։

Ան նշեց, որ վերջերս նուագած է ղէպի երկիր ուղարկուող օժանդակութիւններուն քանակը։

Ան յայտնեց նաեւ, որ այս տարուան ընթացքին նախատեսուած է վերականգնել աւելի քան 400 բնակելի տուններ, եւ արդէն իսկ 83 գիւղերու մէջ սկսած են շինարարական աշխատանքները։

Ան յատկապէս առանձնացուց Մարտակերտի շրջանի թաղի գիւղեր, ուր վերաշինուած են տունները, դպրոցը, բարեկարգուած է բարաշխուրդ եւ նախորդ տարուան 30 ընտանիքներուն կրթարդէն, ներկայիս կը բնակին 120 ընտանիքներ։

Այնպատեանքներ կը տարուին բնակիչներուն կենսական պայմանները բարելաւելու համար, ինչպէս նաեւ միջոցներ կը ձեւարկուին նիւթապէս եւ արդյապէս աշխատեցնելու անոնց։

Լ.Ղ.Հ. բնակեցնող գծեց յատկապէս այլ երկիրներէ Լ.Ղ.Հ. հաստատուած բնակիչներուն վերապահուող արտոնութիւնները, որմէ չեն օգտուիր երկրին քաղաքացիները։

ՄԵՐ ԿԱՄՔԸ ԱՐՏԱՅԱՅՏԵՆԸ ՄԵՐ ԲՈՒԵՈՎ

Հայաստանի նախագահական ընտ-
րությունները ղեկավարելու, անոր գոր-
ծընթացներուն հսկելու եւ այս գծով
վարչական, կապավորչական եւ գրա-
ւանակային բոլոր աշխատանքները հա-
մակարգելու ծանր պարտականու-
թիւնը ունեցող Կեդրոնական Ընտրա-
կան Յանձնաժողովը կը բաղկանայ 20
անդամներէ, որոնց 6ը ընդդիմադիր
կուսակցութիւններէ կու գան, իսկ
մնացեալը՝ նախագահ Լեւոն Տէր Պետ-
րոսեանի պորակից կուսակցութիւնե-
րու եւ Հ. Հ. Ե.Ճ.:

Ստորեւ տրուած յօդուածը կ'անդրադառնայ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովին այս անադրադատկերին եւ կը ներկայացնէ իւրաքանչիւր արհամիւն ամփոփ կենսագրութիւնը:

Այսօր Կենտրոնական Ընտրական Ցանճնա-
ժողովը մեր հանրապետությունում այն մար-
մինն է, որի գործունեությունը լատուկ ուշա-
դրություն է բեռեռում իր վրայ եւ կարող է
եեկան լնշանակութիւն ունենալ պետականու-
թեան զարգացման ուղղութեան առումով:
Ահա թէ ինչո՞ւ մեծ է Կ.Ը.Ց.ի անդամների ան-
հատական ու հաւաքական պատասխանատու-
թիւնը: Ահա թէ ինչո՞ւ անմրոշեշտ է, որ հաս-
րակութիւնը ճանաչի այդ մարդկանց:

[illegible]

Եթե Կ.Ը. Տնախազանի պաշտոնի համարը բու-
եարկություն է մեկ թեկնաճու, ապա նա ընտրուած է
համարուած, եթէ ստացել է Կ.Ը. Յ. անդամնե-
րի ձայների կեսից աւելին: Իսկ մարգային ընտ-
րական լանձնաժողովը կազմաւորում է Ա.Ժ. ի
մբակցութիւնների առաջադրուածներից, ընդ
որում իւրաքանչիւր իմբակցութիւն առա-
ջադրում է իր կազմում ընդգրկուած կուսակ-

ցուրիւնների թուի կրկնապատիկ բռնութեան հոգեբանական ընտրական լաճման ժողովի նախագահի ընտրութիւնն իրականացում է Կ.Ը.Յ. նախագահի ընտրութեան համար սահմանուած կարգով: Եթէ մարզային ընտրական լաճման ժողովի իր առաջին նիստում լաճման ժողովի նախագահ չի ընտրուած, ապա մարզային ընտրական լաճման ժողովի նախագահն է նշանակուած Կ.Ը.Յ.՝ մարզային ընտրական լաճման ժողովի կազմից:

Օրերքի յիշեալ հատումները ակնյայտ են լաւարձում ալն իրողութիւնը. որամեն ինչ, միւսն ալ անգամ օրեքնքերը, մշակում են ընդունում եւ կամաքակալանօրեն: Ա.Ժ. յորորդա հաւնական մեծամասնութեան կամքով, փաստօրեն, ընդունուել է մի օրեքը, որը «ապահովում» է Հ.Զ. Տական մեծամասնութեան կամքի իրականացումը նախագահական ընտրութիւններում: Եւ դա արւում է անթաքոյց, առանց մոլորակ փոքր ինչ քողարկման ցանկութեան մը օրեքնքի արդիւնքում ընտրուել Կ.Ը.Յ. իայն-լիսի կազմ, որի յիշանամէտ ներկայացուցիչներն ամեն յախ Կ.Ը.Յ. յսակաւաթիւ ընդդիմութեան ներկայացուցիչների հետքին անկաշակող նետում են, թէ ցանկացած վիճարարոյց հարց յիշեք կարող են լուծել յոյրը քուէարկութեամբ: Կ.Ը.Յ. ի անգամների թիւը 20 է, որի միայն 6ն են ներկայացնում ընդդիմադիր կուսակցութիւնները (2ը Ա.Ժ.Մ, 2ը Հ.Կ.Կ., 2ը Ա.Բ.Մ.):

4. Է. Յ. Ն. ծեւաւորուեց հետեւեալ կազմով.
 1. **Խաչատուր Պեգործեան** - նախագահ (Հ. Հ. Տ.)
 2. **Ռուբէն Մանուկեան** - նախագահի տեղակալ (Հ. Հ. Տ.)
 3. **Արմենուհի Զոհրապեան** - քարտուղար (Ռ.Ն./Լ.Կ/)
 4. **Սեւակ Առաքելեան** - Հ. Բ. Դ. Մ.
 5. **Ֆիլարէտ Բերիկեան** - Ա. Ժ. Մ.
 6. **Տիգրան Թորոսեան** - Հ. Հ. Կ. (Հանրապետական Կուսակցութիւն)
 7. **Նորայր Խանգադեան** - Ա. Ի. Մ.
 8. **Արմէն Խոջոյեան** - «Մտաւորական Հաստատութիւն»

9. **Ճորճ Յակոբեան** - Ս.Դ.Հ.Կ. (Սոցիալ - Էմանուելյանական Հնչակեան Կուսակցություն)
10. **Կլատիմիր Հախվերդեան** - Ա.Ժ.Մ.
11. **Ռուբեն Յովհաննիսեան** - «Շամիրամ»
12. **Աշոտ Մաշուրեան** - Ա.Ի.Մ.
13. **Տիգրան Մուկուչեան** - Ս.Դ.Հ.Կ.
14. **Արտիոմ Մովսիսեան** - Հ.Հ.Կ.
15. **Կանիա Սիսիթարեան** - Հ.Կ.Կ. (Կոմ-
ունա)
16. **Արարատ Մուրատեան** - «Մտաւորա-

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ.
Ո՞Վ՝ ՈՎ Է

ក្រុម - ឧបត្ថម្ភបរិច្ចាគ»

17. Հիլեն Սուրբասեան - Ն.Կ.Կ.
18. Արման Կարդանեան - ՌԱ/ԼԴ/Կ
19. Սերգէյ Պողոսեան - «Շամիրամ»
20. Արա Զարութիւնեան - Ն.Ք.Ռ.Մ.

Ներկայացնեմք Կ.Ը.Յ.ի նախագահի, տեղակալի, քարտուղարի եւ միւս անդամների նամատու կենսագրութիւնները: Այսպէս.

● **ԻՍԱԶԱՏՈՒՐ ՊԵՋԻՐՃԵԱՆ** - Մկուռեյ է 1950 թ. Կեկտեմբերի 6ին, Նրեշանով, Հ. Հ. Շ. Երաշուրեան անգամ է, մասնագիտութեամբ բնագետ, կենսաբանական գիտութիւններ թէկնաճու: 1968 - 74 թթ. եղել է Ե.Պ.Հ. ի ռեսանով, 1974 - 76 թթ. հրետաւային գելոյ պետ, 1977 - 87 թթ. Գ.Ա. փորձարարական կենսաբանութեան հիմնարկով գիտաշխատող, 1987 - 91 թթ. Ամիւնաթրուներ ի հիմնարկով տարրալուծարանի վարչ, 1991 - 95 թթ. Հ. Հ. Գ.Ն. պատգամաւոր, 1995 թթ. մինչեւ օրս Հ. Հ. կառավարման դպրոցի տնօրէն է: Հ. Հ. Ա. Ժ. պատգամաւոր:

● **ՌՈՒԲԵՆ ՍԱՆՈՒԿԵԱՆ** - Ծնունդ է 1956 թ., Երեւանում, Հ.Հ.Ծ. անդամ, կրթությունը՝ պարզագույն, մասնագիտությամբ՝ կենսաբան-գետ: 1979-91 թթ. Ամիկոսբունների հիմնադրում՝ գիտաշխատող, 1991-95 թթ. Երեւանի Խորհրդային Շրջանային Գործադիր Կոմիտեի քարտուղար, 1995 Ապրիլից մինչեւ Սեպտեմբեր՝ Ա.Փ. Կ.Ը.Ց.ում՝ որպէս լաւանստոլոլի քարտուղար, 1995 թ. Սեպտեմբերից Հ.Հ. Կառավարութեան քարտուղարութիւնում տարածքային կառավարման գծով նախարարի աշխատակազմի գլխավոր մասնագետ:

● **ԱՐՄԵՆՈՒՀԻ ԶՈՂՐԱՊԵԱՆ** - Ծնունդ է 1955 թ., Երեւանում, Հ.Հ.Ծ. անդամ (սակայն Կ.Է.Թ.ում ներկայացնում է Ռ.Ա.Դ/Կ)՝, աւարտել է Երեւանի մարմնակրթաքնի կուլտուրայի ինիմարկը 1989 թ.: 1974-77 թթ. Երեւանի մարմնակրթանքի ուսումնարանում, 1977-79 թթ. Հանրապետական դարմանատնային ինւանդանցում որպէս *մէթոսիս*, 1979-95 թթ. Երեւանու շրջանի թիւ 17, 68, 194 դպրոցներում որպէս մարմնակրթանքի ուսուցչունի եւ համատեղութեան կարգով Երեւանու շրջանի մարմնակրթանքի կոմիտէում *մէթոսիս*, 1995 թ. Օգոստոսից Հ.Հ. Ա.Ժ. Կ.Է.Թ. քարտուղար:

● ՆՇՈՏ ՄԱՇՈՒՐԵԱՆ - Ծնունդ է 1939 թ.,
Երեւանում, կրթությունը բարձրագույն, աւար-
տել է Ե.Պ.Հ. ն 1962 թ., մասնագիտութեամբ
մաթեմատիկոս, ուսողաբնագիտական գյտ
կենսական, *դոցենտ*: 1962-68 թթ. դասույս տել է
Հովակիմյիքիսի պետական բամպայարանում,
1965-70 թթ. Ե.Պ.Հ.ում աւագ դասախօս, 1970-
74 թթ. Հ.Ս.Ս.Հ. Գ.Ա. հաշուողական կենտրոնի
գլխաշխատող, 1974-76 թթ. Հայկական Հան-
րապետական ուսողաբնագիտական իղմ-
նաբարութեան վարիչ, 1976 թ. ցայսօր՝ Ե.Պ.Հ.
հանրահաշու բամպիտում *դոցենտ*:

Ներկայացնում է Ա.Ի.Մ.ր:

● **ՌՈՒԲԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ** - Կ.Ը.Յ.ում էրկայացնում է «Շմախրամ»ը, ծնունդ է 1952 թ., Ներսիսյանի, անկուսակցական է, աւարտել է Զբերանի ժողովրդական տնտեսութեան հիմնարկի աշխատելու տնտեսագիտութեան բաժինը, մասնագիտութեան տնտեսագետ է : 1982-87 թթ. *Ֆորթրոմիյին*ում որպէս գլխավոր ճարտարագետ : 1987-93 թթ. «Միլաձան» գործարանի տնօրէն, 1993-95 թթ. «Հալկեն իսպոպասարկում» Հ.Կ.Մ.ի գլխավոր տնօրէնի տեղակ. 1995թ. առեւտրի, սպասարկումների եւ զբոսաշրջիկութեան նախարարութեան լարչութեան պետ :

● ՆՈՐԱՅՐԻԱՆԶԱԴԵԱՆ - Կ.Ը.Յ. ում ներ-
գլխացնում է Ա. Ի. Մ. ք: Ծնունդ է 1942 թ., Սեֆա-
նի շրջանի Մուլագիղում, աւարտել է Ե.Պ.Հ.
բանասիրական բաժանմունքը, 1971 թ., մաս-
նագիտութեամբ՝ բանասեր, հաջոց լեզուի եւ
գրականութեան ուսուցիչ: 1967-71 թթ. աշխա-
տել է միջնակարգ դպրոցում՝ ուսուցիչ: 1972-
94 թթ.՝ Հայաստանի պատմութեան պետական
թանգարան, աւագ գիտաշխատող: 1994-96 թթ.
Լ.Ղ.Հ. Քաշաթաղի շրջանում Լ.Ղ.Հ. Պ.Պ. Կ. լիա-
զօր ներկայացուցչի տեղակալ, վերաբնակեց-
ման վերաբերական պետ, 1996 թ. Հ.Պ.Պ. Բան-
գարանում՝ աւագ գիտաշխատող:

● **ՍԵՆԱԿ ԱՌԱՔԵԼԵՆՆ** - Կ.Ը.Յ.ում ներկայացնում է Հ.Բ.Գ.Մ.ն: Ծնունդ է 1964 թ. ներկայացնում: Անկուսակցական է: Աւարտել է Կ.Պ.Հ. իրաւաբանական բաժանմունքը, մասնագիտութեամբ իրաւաբան է: 1990 թ. Նոյեմբերից մինչեւ 1995 թ. Ապրիլը Հայաստանի ներքին գործերի նախարարութիւնում քննիչ է եղել: 1995 թ. Ապրիլից մինչեւ Սեպտեմբեր՝ Հ.Հ. Ա.Ժ. պատգամաւորներին ընտրութիւններին Կ.Ը.Յ. իրաւաբանական բաժնում որպէս աւագ խորհրդատու: Ներկայումս չի աշխատում:

• **ՏԻԳՐԱՆ ՍՈՒԿՈՒԶԵԱՆ** - Ներկայացը-
նում է Ս.Բ.Հ.Կ.Ն: Ծնունդ է 1969 թ. Փետրուարի
Ցին, Երեւանում: 1995 թ. աւարտել է Ե.Պ.Հ.
ըրաւաբանական բաժանմունքը: 1987-89 թթ.
ծառայել է խորհրդային բանակում: 1989-91

ԲԲ. «Հայաստկապ» գործարանում՝ ֆրեզերա-
գործ, 1991-93 թթ. Հ.Հ. Գ.Խ. իրաւաբանական
բաժնում՝ աւագ խորհրդատու:

● **ՃՈՐՃ ՅԱԿՈԲԵԱՆ** - Ծնունդ է 1951 թ. Սյրիայում, ներկայացնում է Ս. Ի. Զ. Կ. 1974 թ. արտադրել է Ե. Գ. Զ. արհեստագիտության բաժանմունքը, մասնագիտությամբ՝ արհեստագետ պատմաբան, 1969-74 թթ. Ե. Գ. Զ. արհեստագիտության բաժանմունք, 1975-79 թթ. լեռնափորության պետական թանգարանի ցուցման դեպի բաժնի վարիչ, 1979-84 թթ. Իրաքում արաբերեն լեզուի թարգմանիչ, 1985-89 թթ. հեռուստատեսության հեռատիոհաղորդման բաժնի պետական կոմիտեի արտասահմանային հաղորդումների խմբագրության, առաջ խմբագիր 1989-90 թթ. Քուեյթ, արաբերեն լեզուի թարգմանիչ: 1993-94 թթ. Իսմասկուի միջազգային ցուցման դեպի հեռուստ. Զ. Զ. տաղաբաշխության, 1994-95 թթ. Ֆրանսիա-Արբենիա Ս. Գ. Զ. արաբերեն լեզուի թարգմանիչ, 1995-96 թթ. Արաբական Միացյալ Էմիրություններ, արաբերեն լեզուի թարգմանիչ:

● **ՄԱՐԱՐԱՏ ՍՈՒՐԱՏԵՆ** - Ներկայացնում է «Մտաւորական Հայաստան» կուսակցութիւնը: Ծնունդ է 1955 թ. Ռալլինի շրջանում: Կրթական կարգավիճակը՝ 1974-77 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1977-89 թթ. «Երարդշին»-ի մեքենագիտական թափանքի փակակարգը: 1978-84 թթ. սովորել է Ե. Պ. Հ. Իրաւաբանական բաժանումնւրում (Երեկոյեան բաժին), մասնագիտութեամբ իրաւագէտ է: 1989-91 թթ. «Երարդշին»-ի Իրաւախորհրդատու: 1991 թ.-ից Արդշինբանկի Էքսբլուռ բաժանումնւրում իրաւախորհրդատու է:

● **ԱՐԱՆԵ ԽՈՉՈՅԵԱՆ** - Ծնունդ է 1961 թ. Ներսիսում: Ներկայացնում է «Մտադրական Հայաստանը»: 1984 թ. արտոնել է Մոսկվայի Տիվիրիազեի ակումբի գիւղատնտեսական ակադեմիան: Գիւղատնտեսական գյու. բեկեման է: 1981 թ. աշխտել է «Հայդետնոլ ինվեստիվ» հիմնականում որդի ե առաջարկ Երարագետ: 1992-93 թթ. «Ագրորարդ» գիտութեան եւ արտադրութեան ամսագրի գլխաւոր իմբագիր: 1993 թ. «Գիւղատնտեսութիւն-Գիտութիւն» տեղեկագիտական ամսագրի եւ «Թանկարդ» բեթի գլխաւոր իմբագիր, 1995 թ. «Ագրորդիկ» իմբագրական կեներոնի գլխաւոր իմբագիր:

● **ԱՐՏԻՈՄ ՄՈԿՍԻՍԵԱՆ** - Ծնունդի 1967 թ. Անդալուսիայի Զալդարբի, Երեսնամյա, Հ.Հ.Ծ. անդամ: Անդալուսիայի Ե.Պ.Հ.ի *տեխնիկոնոմիկայի* բաժանմունքը, 1990 թ., Ե.Պ.Հ. իրաւաբանական բաժանմունքի հետազոյ բաժնի իրոյ տարւոյ ուսանող է: Մասնագիտութեամբ արդիւնաբերական էլէկտրագործ: 1995-96 թթ. Ա.Ժ.Կ.Ը.Յ. անդամ է: Արաբիկի շրջադասարանային լեզուներով 1990-95 թթ., ներկայումս Հ.Հ. նախագանի վերահսկողական ծառայութեան իշխանութեան հանրադատական մարմնի ներքին բաժնի առաջատար մասնագետ:

● **ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ** - Ներկայացնում է Հ.Հ.Կ.Ը. Ծնունդ է 1956 թ., Երեւանում: 1978 թ. աւարտել է Ե.Պ.Հ. հաշուիչ տեխնիկայի բաժանմունքը: մասնագիտութեամբ էլեկտրոնային տեխնիկայի մատարագետ, արհեստագիտութեայի գլխու թիւների բեկեմաժու: 1978 թ. աշխատել է Երեւանի մարտեմարիկական մեքեմների գլխահետագոտական հիմնարկում: Հիմնականում՝ աշխատանքի զուգահեռ. 1993 թ. հասարակական կարգով աշխատում է որդեկ «Հանրային տակաժ» թերթի գլխաւոր խմբագրի տեղակալ:

● **ՎԱՆԻԱ ՄԻԻԹԱՐԵԱՆ** - Ներկայացնում է Է.Կ.Կն. Ծնունդ է 1947 թ., Երեւանում: 1970 թ. սարտեի է Երեւանի Պետական Լամալա-րակ: Մաթեմաթիկոս, ուսողաբնագիտական գիտութիւններ թեկնածու, *դոցենտ*: 1970-79 թթ. Երեւանի մաթեմաթիկական միջնաների գիտահետգտական հիմնարկի ճարտարա-գէտ, 1979-93 թթ. Գ.Պ. Զ. ապիրան, 1993 ից Արտիստիկանական Ենկալաբարտական հիմնար-կի դասախօս, աւագ դասախօս, *դոցենտ*:

● **ՍԵՐԳԷՅ ՊՕՂՈՍԵԱՆ** - Ներկայացնում
«Շամպիրամ»ը: Մնում է 1963 թ., Զախարով:
1990 թ. աւարտել է Ե.Պ.Զ.ը, մասնագիտու-
թեամբ ելեկտրոնային արհեստագիտութեան
նարտարագետ է: 1980-90 թթ. կապի գիտահե-
տազօտական հիմնարկի տարբեր բաժիններում
աշխատել է որպէս ելեկտրական տարը-
ւորումներ կազմող, կարգաւորող, տե-
ղումապլի կարգիչ, աւագ վարպետ: 1920-
22 թթ. Ներքղիորհրդի նախագահի օգ-
նական, 1992-93 թթ. Ներքղիցանցի օգ-
տի տեղակալ: 1993 թ. մինչեւ այժմ Զա-
խարովին Ազգային Պատկերասրահի փոխ
տնօրէն:

● **ՎԻԼԷՆ ՍՈՒԶԻԱՍԵԱՆ** - Ներկա-
յացելով է Հ.Կ.Վ.Ն: Ծնունդ է 1933 թ.,
կրմաւիրում: 1958 թ. աւարտել է Երես-
նի գիւղատնտեսութեան հիմնարկը, մաս-

նազիտուրեանմբ ճարտարագետ - մեքենագետ է: 1958-61 թթ. աշխատել է Արմատլիքի գիլղատնտեսական ուղղութեաւաւում: 1961-68 թթ.՝ Քուլալալի ձաւնրդմտութեան գիլղատնտեսութեան նախարարութեան իորնրդատո: 1968-69 թթ.՝ Հալգիլղմեքանիլղալալի գիտանետաղտնական ճիմնարկի աւաղ գիտաշլատշտող: 1969-75 թթ.՝ Հալատաննի Ներքին Գործող Նախարարութեան կալանալալերկի վարչութեան պետի տեղալալ: 1975-82 թթ.՝ Հալգիլղմեքանիլղալալի ԳԱՄի լատուկ փորձաւարական գործարանի տնօրեն: 1982-91 թթ.՝ Քուլալալի գիլղատնտեսութեան նախարարութեան իորնրդատո: 1991-93 թթ.՝ Հալգիլղմեքանիլղալալի Գ.Հ.Է.ի աւաղ գիտաշլատշտող: 1993 թ. կենսալոշակաւո:

● **ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ** - Ներկայացնում է ՌԱԼԴԿ.Ն: Մնուել է 1965 թ. Երևանում: 1988 թ. աւարտել է Երեւանի բժշկական հիւանդարկը, մասնագիտութեամբ բժիշկ է, բիշկ-էնդոգերոլոյ: 1982-88 թթ. եղել է Երեւանի բժշկական հիւանդարկի ուսանող: 1988-89 թթ. աշխատել է Ե.Բ.Ի.ում, 1989-92 թթ. Սպիտակի բուժփառորումում եղել է բժիշկ-էնդերոլ: 1992-94 թթ. Մ.Բ.Ռ.Լ.Մ.ի *օրինատոր* բաժանմունքի վարիչ: 1994-96 թթ. Հ.Հ. պաշտպանութեան նախարարութեան իւր X զօրամասի բուժօտայութեան պետ:

● ՎՈԿԱ ՀԱՄՎԵՐԴԵԱՆ - Ներկայացնում է Ա.ժ.Մ.ն: Ծնունդ է 1949 թ., Իջեանի շրջանի Դիտառան գյուղում: 1979 թ. աւարտել է Երես-
նի բազմաբուհետից ինժնեարէլ: Ուսմանը դոմ-
գրինքից աշխատել է Հայէլէկտրագործարական
(1969-74 թթ.) որպէս փականագործ, արտադրա-
մասի վարպետ, հեքթավոլի պետ, հարտաբա-
զետ, արտադրամասի պետ, գլխաւոր մէքենա-
գետ: 1986 թ. անգլոյշ չլանց գործով իւն կա-
ռարելու մեղադրանքով դատաւարտուել է ազատազրկման երկու տարի ժամկէտով, իսկ
1988 թ. Մարտին արդարացուել է: Ղարաբաղ-
եան շարժման մասնակցներէց է: 1991 թ.
Փետրուարին հեռացել է ՀՀ.Շ.ից եւ Ա.ժ.Մ.-
կազմաւորման առաջին իսկ օրից անդամագըր-
ւել է այդ կուսակցութեանը: 1992 թ. նախաձեռ-
նել եւ ստեղծել է Ա.ժ.Մ. իրաւապաշտպանե-
րի ակումբը, որի նախագահն է: Ա.ժ.Մ. վար-
չութեան անդամ է:

● **ՖԻԼԱՐԷՏ ԲԵՐԻԿԵԱՆ** - Ներկայացնում է Լ.Ժ.Մ.ն: Ծնունդ է 1951 թ., Զառաիքում: 1971 թ. աւարտել է Երեւանի Պետհամալսարանը կի

քառակն մաթեմատիկայի բաժանմունքը։ Այժմ իստեղի է տարբեր գիտահետազոտական կամ մնարկները եւ հաշուողական կենտրոնները՝ մարտարագետից մինչեւ բաժնի վարիչ։ Գլխացուցութեամբ ասարտել է Մոսկուայի տնտեսավիճակագրական եւ կառավարման հիմնարկները, լատուկալընթացքները։ 1984-88 թթ. աւաւակդիւ է Ե.Պ.Է.ոււմ։ 1990 թ. Նոյնաբերից մինչեւ 1994 թ. Յունիսիւն աշխատել է Հ.Զ. խտուկ ծրագրերի տետական վարչաւթիւնում՝ տետի տեղակալ։ Ստեղծման տակմաց Ա.Ժ. աւղաւմ է։ Մասնակցութիւն է ունեցել Զաւաթի հալութեան կազմակերպական գործում։

Այս ամենից շատը պարզ է դառնում, որ Կ.Ը.Յ.ի 20 անդամներից միայն 6ն են ընդդիմադիր. միւսները ներկայացնում են Հ.Հ.Շ.Ն. կամ «Հանրային տեղեթիւն» միաւորումը: Ընդ որում՝ Հ.Հ.Շ.Ն.ի կուսակցութեան անդամներին պարտադրել է անել «Հանրապետութիւն» միաւորման կուսակցութիւններին, այսպէս՝ Կ.Ը.Յ. քարտուղար Արմենունի Մուրադեանը, որը Հ.Հ.Շ. անդամ է. Կ.Ը.Յ.ում ներկայացնում է ՌԱ/ԼԴ/Կ.Ն, Արտիւմ Մուսխանը՝ Հ.Հ. Կ.Ն.:

Նախորդ Կ.Ը.Յ.ի կազմից 6 հոգի ներկայ Կ.Ը.Յ.ում են ընդգրկուել: Կ.Ը.Յ.ի մամուլը ասուլիսում, պատասխանելով մեր այն հարցին, թե ինչպէ՞ս է պրն. Պեշոքինեան վերաբերում աշխատակիցներին ինչո՞ւ են ճշ «այսպիսիութիւն», Կ.Ը.Յ. նախագահը պատասխանեց, որ այդպէս որոշել են աշխատանքայինը պաշտպանող կուսակցութիւնները, եւ, իր կարծիքով՝ ճիշդ են վարուել. քանի որ կարեւորել են նրանց փորձառութիւնը:

Իսկ այդ «փորձառութիւնը» յատկապէս երեւում է Կ.Ը.Յ. ի նկատերի ընթացքում, երբ ընդդիմութեան ամենաամենդ առաջարկներին ամենակատաղի դիմադրութիւն են ցուցաբերում՝ նախկին Կ.Ը.Յ. «փորձառու» անդամները։

ՆԱՐԻՆԷ ՄԿՐՏՁԵԱՆ




ՀԱՍՆԱԶԳԱՅԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԻՊՈՒՄ

(ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԳԷՏ)
ԳՐԻԳՈՐ ՊԼԸՏԵԱՆԻ ՀԵՏ


Ուրբաթ, 2 Օգոստոս 1996, երեկոյեան ժամը 9ին, Համալգալիի «Լ. Շանթ» Կեդրոնին մէջ, Ե. յարկի սրահը:

ՄԵՐ ԿԱՄՔԸ ԱՐՏԱՅԱՅՏԵԼՔ ՄԵՐ ՔՈՒԷՈՎ



ԾԵԾՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԶԱՐՐԻ ՈՎ ՍՄԲՈՒՎ



ՏԱՆ ՄԷԿ ԱՆԿԻՒՆԸ

ԹԱՏՐՈՆ

Ի՞նչ ընել,
երբ օղլ շուք սւք է

ՈՄԱՆՔ ԱԻԵԼԻ
ԶԳԱՅՈՒՆ ԵՆ

ԱՆՈՒԱՆ ԿԻՆԵՐ

ᐱᐃ ᐅᐃᐱᐱᐱ

ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՄԻԶՈՅԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱԲԹՈՒԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՆԸ

ЛУЗ ЕЛ 4УЗ, ЛУЗ ЕЛ

Մէկն էլ բերանից ծպտուն չի հանում,
Բայց արցունքներն են շիթ - շիթ լճանում:

Մէկն էլ, ինձ նման (գուցէ նաեւ քե՞զ),
Բարձր ճշարտ սովոր չէ բնաւ,
Եւ արցունքներն էլ աչքից չեն յորդում,
Այլ հոսում են ներս
Ու կիսում դանդաղ
Չեչաքարի պէս ծակծկումս սրտում:

7. 57644

Այս էջը պատրաստեց՝ **ՇՈՒՇԻԿ ՄԱՒԻՍԱԳ-ԱԼԵԱՆ**

ՕԴԱՆԱԻԱՅԻՆ ՏՈՄՍԵՐ ԵՒ ԳՈՅՔԵՐՈՒ
ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

/// ara /// TRAVEL 
ARA TRAVEL. ՊՈՐՏ ՀԱՄԻՆԻ. ՆԱՍԱԿԱՏԱՆ ԾԵՆԻ.
ՀԵՌ. 584340 - 583916 - 490211
ԹԵԼԵԲՓ՝ ARATRA LE 44082

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

⊕ ሆፒወደ።፲፭፭	⊕ ደ። -ደቡባዊ፡፲፭፭
⊕ ቡዙህ፡፲፭፭	⊕ ለቡዙህ፡፲፭፭
⊕ ህዙወ	⊕ ህዙወ፡፲፭፭
⊕ ደህወ፡፲፭፭	⊕ ህዙወ፡፲፭፭
⊕ ቡዙህ፡፲፭፭	⊕ ህዙወ፡፲፭፭

Պուրճ Համոստ – Զաղաքապետարանի հրապարակ,
հեռ. 261270, 266432, 581011, 583218, FAX 583219

ՄԵՐ ԿԱՄՔԸ ԱՐՏԱՅԱՅՏԵԼԷ ՄԵՐ ՔՈՒԷՌԿ



ԱԹԼԱՆԹԱ 96

ՄԱՐԳԱԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻ ՀԻՒՐԸ

1960 չուժ... Ողիմպիական մրցումներուն, կրուփամարտի թեթեւ - ծանր կշիռի մրցումներուն, անծանօթ ամերիկացի մը՝ Քասիուս Քլէյ շահեցաւ ոսկի մետալը: Ուրախ Քլէյ անծանօթ մըն էր, նիւթապէս համեստ ընտանիքի մը գաւազը:

Ան վերադարձաւ իր ծննդավայրը եւ իր նախասիրած մարզախաղը շարունակելով հանդերձ, դրամ չահելու համար... ճաշարանի մը մէջ իրեւ սպասեակ գործի դիմեց: Քլէյ մերժուեցաւ, որովհետեւ ճաշարանին բոլոր պաշտօնեաները... սպիտակամորթ էին:

Ձայնը թր սահման չուէր, այնքան մը, որ անայդ ոսկի մետալը անարգանք նկատեց եւ նետեց Օհայո գետը:

Քլէյի մէջ ծնած էր վրէժի եւ դժգոհութեան ապրում մը: 1964ին, ան աշխարհի ծանր կշիռի (արհեստավարժ) ախոյեանութեան տիրացաւ եւ որոշեց վրէժ լուծել հռչակով: Առաջին հերթին, ան փոխեց իր կրօնքը եւ կոչուեցաւ Միւսամէտ Ալի Քլէյ, իսկ կարճ ժամանակ մը ետք, դեռ 22 տարեկան, մերժեց Վիեթնամ մեկնել, ամերիկեան բանակի գինւորներուն համար մրցելու:

Եւ անոնց կորովը բարձրացնելու համար:

... 1996, Աթլանթա: Ողիմպիականին ազդանրչանը մօտեցած է: Ո՛վ պիտի ըլլար վերջին անգամ աշոջ ջահը բարձրացնողը: Գաղտնիք մը՝ գործարարական Տուենն ու կազմակերպիչ Մարմինը որոշած էին պահել:


Եւ ահա «Մեծագոյնը», թէ եւ քիչ մը գիրացած, ծերացած, սակայն միշտ նոյն Քլէյը կը յառաջանար դէպի մեծ ջահը:

Տարիներ շարունակ ամերիկացի ժողովուրդը ու աշխարհը զրադեցուցած կռիւ մարտիկը՝ սեւամորթ եւ իսլամ, կը յառաջանար ազդանրչանը տալու բարեկամութեան եւ ընկերութեան:

Յուզուած էին բոլորը, նախագահ Քլինթոնն էլ մինչեւ Քլէյ, որ մեծ դժուարութեամբ եւ բաւական մտածելի ետք, յօտարեցաւ ըլլալու այդ վերջին վագոյրը: Փարքինսըն հիւանդութեան տառապող եւ ղողացող, 54ամեայ Քլէյ իր վրայ կեղորոնացուց բոլորին ուշադրութիւնը:

Քլէյ յատուկ օդանաւով մը հասած էր Աթլանթա եւ խոստ հսկողութեան տակ փոխադրուած էր պանդոկ մը, քանի մը քայլ հեռու «Օփերա»էն, որուն մէջ 26 տարի առաջ, 1970ին տապալած էր ձերի Քուարտին: Ան նախապէս երեք տարի ոչ մէկ մրցում ունեցած էր, որովհետեւ պատժուած էր, Վիեթնամ երթալ մերժելուն պատճառով:

Քլէյի գործակատարը՝ Հաուրդ Պինկհամ յայտնեց, թէ առաջարկը երկար



Ալի Քլէյ, Ողիմպիականի ջախը վառելու պահուն

քննել էր իր անցեալը վերադարձնել ետք, անորոշած է ստանձնել այս դրժար պաշտօնը:

Հանդիսութեանը ետք, Քլինթոն երկար խօսակցութիւն մը ունեցաւ, կրուփամարտի աշխարհի աստուծին հետ, եւ յայտնեց, թէ Սպիտակ Տան դուռները բաց են անոր առջեւ:

Դանդաղ խօսող Քլէյ ըսաւ. «Կրնամ ընել ինչ որ փափաքիմ: Այս պատճառով այսօր հոս եմ»:

Հաւանաբար Քլէյ իր շահած մետալին նմանակը ստանալ Ողիմպիական կոմիտէին:

Քլէյի կողքին, այլ սեւամորթ մը, Աթլանթա ծնած Մարթին Լութըր Քինկ (սպաննուած) ոգեկոչուեցաւ բացման հանդիսութեան:

1964ին Նոպէլեան մրցանակ շահած Քինկ, տարի մը առաջ, Ուաշինկթոնի մէջ 20րդ դարու կարեւորագոյն ելոյթներէն մէկը՝ «Ունիմ երազ մը» ունեցած էր: Խաղաղութեան համար պաշարող Քինկ սպաննուեցաւ Մեմֆիսի մէջ, 4 Ապրիլ 1968ին: Անոր կինն ու գաւազը՝ Քորեթան եւ Տեքսթըր քանի մը վաղը կեան բարձրացուցին Ողիմպիական դոշը:

«ՄԷՅՃԸՐ ԼԻԿ»

ՎԱՆՏԵՐԱՄԱ 2 ԿՈՒ ՆՇԱՆԱԿԵՅ

«Մէյ 6ըր Լիկ»ի ախոյեանութեան մրցումներուն գծով, Թաւփա Պալ Մուրիւնալի մարզիկներէն, քոյրմպիացի միջնապահ՝ Քարլոս Վալտերամա 2 կոյ նշանակեց (երկուքն ալ փետալթիով), եւ իր կազմը 4 - 3 արդիւնքով պարտութեան մատնեց Լուս Անճելլոս կէլէքսին:

Հակառակ անոր, որ Միացեալ Նահանգներու ազգային խումբին միջնապահ՝ Քուպի Ճոնզ Դեթ-թրիք մը իրազորեց (32րդ, 60րդ եւ 63րդ), բայց ատկալաւարար չեղաւ, որ Կէլէքսի յաղթանակ մը ապահովէ: Ճոնզի խաղընկերներէն՝ յետսապահ Մարք Սեմիտի 20րդ վաղընկեանին չկրցաւ փետալթին իր նպատակին հասցընել:

Վալտերամալի փետալթիներէն առաջ (72րդ եւ 45րդ) Քլէ Քոյմըն եւ իտալացի ծիուսեփէ կալտերիսի նշանակած էին առաջին 2 կոյերը:

Նիւ Եորք - Նիւ Ճորգի Մեթրոսթարզ 4 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Սան խոսէ Քլէյը:

Իտալացի աստղ Ռուպերթո Տոնատտին թէ եւ կոյ չնրչանակեց, բայց առաջին 3 կոյերուն փոխանցումները կատարեց:

Միացեալ Նահանգներու ազգային խումբին նախկին խմբապետը՝ Փիթըր Վերմէս, նշանակեց Մեթրոսթարզի առաջին կոյը. ան նշանակեց այս եղանակի իր առաջին կոյը: Ռուպ Ճոնարն, Ա. Ճէյ. Վուտ եւ Ռէթ Հարտի նշանակեցին միւս 3 կոյերը:

Հրիք Ուինսլայտ նշանակեց պարտեալ խումբին միակ կոյը: Անոր կազմը՝ Քլէյ, մրցումը աւարտեց ինը մարզիկով, երբ յետսապահ Ճոն Տոյլ եւ յառաջապահ Էտի Լուիս կարմիր քարտ ստանալով, դաշտէն վտարուեցան:

Տալաս Պրըն 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Քոլորադոս Ռէփիտը: Լէոնէյ Ալվարէս, Ուէօ Սանչէս եւ Ճէլլոյտ Էլիթթ նշանակեցին Պրընի կոյերը:

Տի. Սի. Եունայթըտ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Քոյմպոս Քրուէ: Սթիւ Ռէմը (որուն 12րդ կոյն էր այս եղանակին) եւ Ճէյ Մարչ նշանակեցին Եունայթըտի 2 կոյերը:

ՀՐԻՍԹՕ ՊՈՆԵԻ ՅԱԶՈՐԴԵՅ ՓԵՆԵԻԻ

Պուկարիոյ ֆութպոլի ֆետերասիոնը շարաթասկիզրին ազգային խումբի մարզիչ նշանակեց Ափոնէ Նիկոսիոյ (Կիպրոս) մարզիչը՝ Հրիթս Պոնեւ:

Պոնեւ յաջորդեց Տիմիթար Փենեւի, որ «Եւրոպա 96»ի մրցաշարքին ձախող արդիւնքներ արձանագրած ըլլալուն պատճառով, պաշտօնանկ եղաւ ֆետերասիոնին կողմէ:

Պուկարիոյ ազգային խումբին միջազգային նախկին մարզիկներէն Պոնեւ 96 անգամ կրած է ազգային խումբին շապիկը, 42 անգամ եղած է խումբին խմբապետը եւ միջազգային մրցումներու ընթացքին նշանակած է 47 կոյ:

Պոնեւի մարզած առաջին խումբը եղած է Լոքոմոթիւ Փրոփուր, ապա ան յաջորդաբար մարզած է յունական Փանաթինայոս, Լարիսա եւ Իոնիքոս խումբերը:

ՆՈԹԻՆԿԷԱՄ ԿՈՐԷՍԹՕՅՏՈՒՆԵՍԱԻ ԽՐՈՒԱԹ ՅԵՏՍԱՊԱՀՈՎ ՄԸ

Խրուաթ յետսապահ Նիքոլա Երգան շարաթասկիզրին 3 տարուան համար պայմանադրութիւն մը ստորագրեց Նոթինկհամ Ֆորէսթի հետ. անոր փոխանցումը Ֆորէսթի արժեք 1-6 միլիոն տոյար: 31 տարեկան Երգան, որ նախապէս մաս կը կազմէր սպանական Ռէալ Օվիետոյին, «Սիթի Կրաւուս»ի մէջ սկսած է իր փորձերուն:


ԱԹԼԱՆԹԱՅԷՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ




Սուրիոյ ոսկի աղջնակը՝ Ղատա Եուալա կը տօնէ Եօթնամարտի իր առաջնութիւնը...



Եւալ իր երկրին դրօշին ղեկաւ:



Յաղթանակ տօնելու սովորական ձեւ սը: Հարաւային քորէացի 20 Միւն-Սու յուզում է, շահել է հոր 66 ըլկ. միտոլի առաջնութիւնը:



400մ. վազքի մրցանիշակիր Պաշ Ռէլնոլազ գետին ինկած է կիսաւարտականի մրցումներուն եւ դուրս մնացած:

ՄԵՐ ԿԱՄՔԸ ԱՐՏԱՅԱՅՏԵՆԸ ՄԵՐ ԲՈՒԷՆՈՎ

14ԱՄԵԱՅ ՀԱՆՆԷՍ ՍԱՐԶՈՒՆԻ ՊԱՏՈՒՅՑ ԶԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՄԲ...

կատարել իր առաջին քրոն-
նոթիները եւ կրօնական իր
առաջին բարձրագույն նի-
շը՝ «Ա» մը, որմէ ետք 12
տարեկան հասակին Հան-
նէս իր լիաժամ աշակերտ
կ'ընդունուի համալսարա-
նէն ներս:

Այժմ, Ռաթկիրի Համա-
լսարանի 230 տարեկան
պատմութեան մէջ, առա-
ջին անգամ ըլլալով 14 տա-
րեկան պատանի մը կ'իւ-
րացնէ երկու տարեբար վա-
յակները միաժամանակ:
Հաննէս տիրացած է ուսու-
ղութեան եւ համակարգչա-
յին գիտութեանց Պատկա-
ւոր Գիտութեան (Յ.Տ.)
տիտղոսներուն:

«Հրաշք պատանի» ին-
մասին լաշտօրէն արձա-
ցանց հանդիսացան ամե-
րիկեան լրատուական շր-
ջանակները: Իր մասին
գրեցին «Տը Ժիլատելիֆիա
Բըրուայըրը», «Տը Սթար
Լէեթը», «Եու. Էս. Էյ. Թու-
տէյը». «Տը Թայմզ» թեր-

ՀԱՄԱԶԳԻՅՈՒՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ԾՐՁԱԿԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ԱՆՆԱԽԵՐԹԱՅ ԾՐՁԱՊՏՈՅՑ ԴԵՊԻ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՑԱԽ

Ամբիւս ընթացքին լիբանանահայութիւնը առիթ ունի այցելելու Հայաստան եւ Արցախ, ծանօթանալու համար հայրենի բնութեան եւ հաղորդակցելու հերոսական պայքար մղող հայրենակիցներուն հետ:

Յատկապէս Լ. Ղ. Հ. Կրօնաշրջիկութեան սատարելու նպատակով կազմակերպուած շրջապտույտներէն վերջինը տեղի պիտի ունենայ՝

- 27 Օգոստոսէն 3 Սեպտեմբեր (դիմելու պայմանաժամ 12 Օգոստոս):

Շրջապտույտին լալտագիրը կ'ընդգրկէ այցելութիւն Չանգեղուրի շրջան, ապա մեկնում Արցախ: Ծանօթացում Ստեփանակերտի, այցելութիւն Գանձասարի, Գաղիվանքի, Ամարասի պատմական վանքերը, Սարսաղի ջրամբարը, Թարթազ գետի հովիտը, Մարտակերտի, Մարտունիի, Հատրութի եւ Զուլիի շրջանները:

Մասնակցութեան սակ 650 ամ. տոլար (ներառեալ ճաշ եւ կեցութիւն): Հետաքրքրուողներէն կը խնդրուի դիմել Համազգայինի Շրջանային վարչու-րեան գրասենեակ (Լեւոն Ծաւր Մշակութային Կեդրոն, հեռ. 265899, Երկուշաբթիէն Ուրբաթ, կէսօրէ ետք ժամը 4էն 6):

ՏԵՂԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՒԹԱԿ ԵՆ:

Հ.Յ.Դ. ՌԱՌԻՏԱՅԻ ԱԿՈՒՄԲ

ՔԵՐԱԷՍ

Կազմակերպութեամբ՝
ՌԱՌԻՏԱՅԻ ԱԿՈՒՄԲԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ
ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲԻՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ 2, Ծաւր 3 եւ Կիրակի 4 Օգոստոս 1996, երեկոյեան ժամը 6էն սկսեալ, Ռաուտայի պապերայով դաշտին մէջ:

ԵՐԳԱՀԱՆԳԷՍ

Մասնակցութեամբ՝ սիրուած երգիչներ
ԱՐԱՐԱՏ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
եւ **ՎԻԳԷՆ ՏԻՇԶԷՔԷՆԵԱՆԻ**

Ընկերակցութեամբ
ՇԱՆԹ ՏԻՇԶԷՔԷՆԵԱՆԻ
եւ իր նուագախումբին

Ծաւր 3 Օգոստոս, երեկոյեան ժամը 10.30էն սկսեալ նոյն վայրին մէջ:

Հ.Բ.Ը.Մ.

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ (Մ.Կ.Ը.)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ.Բ.Ը. Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը յաճախել փափաքող բոլոր աշակերտները, լրացնել ետք Մ.Կ.Ը. ընդունելութեան պայմանները, պարտին մուտքի ընդունելու յանձնել Պէտրոսի Հ.Բ.Ը.Մ. գրասենեակէն ցերս (Լեւոն Կ. Նազարեան վրձի շրջափակ, Սիւն Էլ Ֆիլ, Հըրշ Թապէթ), Օգոստոս 12ին՝ հայերէն եւ անգլերէն լեզուներու, եւ Օգոստոս 13ին՝ թուաբանութեան եւ գիտութեան:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ

ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգա-կ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պիտի է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուապէս օր մը առաջ, ՄԻՆԶԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՓԱՄԸ 5:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահապղ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ վախ հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՅՆՃԱՐ

ՍԱՐԳԻՍ ՖՈՒԾՈՒՐԵԱՆԻ Գահատակութեան Ի. տարելիցին առիթով եւ համայն ՖՈՒԾՈՒՐԵԱՆԻ ԸՆԶԵՑ-եալներուն յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 1996, Այնճա-րի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՀԱՅՐԱՊԵՏ ԼՈՒԹՅՈՒՆ ԱԶԶԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՍՈՒՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-ւի Կիրակի, 4 Օգոստոս 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԶՈՂՐԱՊ ՊՈՅԱԶԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-ւի Կիրակի, 4 Օգոստոս 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ֆարէս Մուսալլի՝ ընդ Նորա Տունաճեանի ամուսնութեան առիթով, շնորհանորակաճ ալ-ցելութիւններ կ'ընդունուի մորապսակ ամուսի Զահլէի բնակարանին մէջ, Հոշ Ումարա, Ուր-բաթ 2, Ծաւր 3 եւ Կիրակի 4 Օգոստոսին:

HYE FOODS

ԱՊՍՊՐԵՑԷՔ ԵՒ ՃԱՇԱԿԵՑԷՔ

ԼԱՆԳՈՅՆ ՍԻՒ ՊԵՕՐԷԿԸ

Ունիք խաւաճապեղ փեսայի
հալիակաճ եւ լիբանանեան պէտքերը:

Պուրճ Համուտ, Ս. Վարդանանց եկեղեցւոյ դիմաց, Գրաճեան շէնք, Ա. յարկ: Հեռ. 582689:

Լ. Օ. ԽԱԶԻ «ԱՐԱՆԻ ՓԱՓԱՋԵԱՆ»

ՄԱՍՆԱՃԻՐ - ԶԱԼԸՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 6 Օգոս-տոս 1996, առաւօտեան ժամը 9.30ին, Զալ-բայի Աղբալեան ակումբին մէջ:

- Օրակարգ՝
- Վարչութեան ընտրութիւն.
- Անդամութիւններու ցերեկային խիստ փափաքելի է:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

The Revolutionary Japanese Air Conditioners

DYNAMIC made in Japan

I like it
Powerful
Ideal
Cool
DYNAMIC

9000 - 24000 B.T.U.
HEAT PUMP SPLIT SYSTEMS

- EXCEPTIONALLY QUIET OPERATION
- LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
- FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
- UNBEATABLE PRICES

Exclusive Distributors:
G. Ayanian & Sons
Dora, Tel: 884914 - 870210 (jumping numbers),
Fax: 265187.
Gemayzeh, Tel: 447940 - 445096,
Fax: 582357, Cell: 03/ 627729 - 8.

ՖԱՐԷՍ ՄՈՒՍԱԼԼԷՍ

ԸՆԴ ՆՈՐԱ ՏՈՒՄԱՆԵԱՆ

Ամուսնացեալ
Զակի, 21 Յուլիս 1996

Կ'ՈՒԶՈՒԻ

- Ստանարան, լուսացքի մեքենայ եւ Լը-րոնտիշըն-րոգող փորձառու վարպետ-ներ, աշխատելու համար Լի-բանանի բոլոր շրջաններուն մէջ: Վճարման լալ պայման-ներ:
- Դիմել՝ հեռ. 447040 եւ 583754, առաւօտեան ժամը 9էն կէսօրէ ետք ժամը 4:

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

- Պուրճ Համուտի Գահա-կատան մօտ, Բ. յարկ: Դի-մել՝ հեռ. 328694:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

- Ռոյալի կից, Ա. յարկ. 3 մեքենան, 6 իւրաքանչե-րէն, 6 ճաշանոցեան եւ յարա-կից մասեր:
- Կառատունը ապահով-ւած: Դիմել՝ հեռ. 497016:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Սոմա Գահատակի մահ-ւան առիթով, առիթով Պի-րոսի թաղանթի եւ զուստ-րերը 20.000 լ. ոսկի եւ տէր եւ առիթով Արտաճաճ Բաղ-լայան 20.000 լ. ոսկի 10-ի ձալիայի Աղաւթի Փա-փազանք մասնաւոր դիմ:

ՀԻՒՆԱՆԱՆՈՑ ՍՈՒՏԵՐ ՆԻՒ-ԹԱԿԱՆ ՄՍԱՆԳՈՒ-ԹԻՆՆԵՐԸ ԶԵՐ-ԲԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵՐ՝ ԱՅՀԻԼԻ մօյլ

- ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ակերով
- ԱՆՈՒՆԱԳՈՅՆ խմամբ
- Վճարման դիւրութիւններ

Հասցէ՝ Ազգային Խոր-հորդի շէնք, ԱՅՀԻԼԻ կից, Հեռ. 263324

Կ'ՈՒԶՈՒՆ ԱՍՏԵՐԸ

- **ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)**
Չրոյց մը կրնայ վերի փոխուիլ ու բաժանուիլ շրջա-պատը: Լալ կրնայ, որ առիթ չտալ մահու վերջին՝ հարցը մեղմացնելով եւ Լը-րոնտիշըն:
- **ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**
Օրը կրնայ ապահովել ստեղծել, բայց ձեր համար ա-ւոր համբերութիւնը պիտի տեղի եւ զիմացի, բոլորին, մահուանը երբ ինքնաշարժի զիմացի վրէժն ու խնդ-րով մէջ:
- **ՔԵՐԿՈՒՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**
Գործերը դիմում եւն, մահուանը երբ, արժանուրը, վերադարձաճ Լ. Ը. Ուշայի եղբ. ու առաջին տոճ, անպա-տեհութիւններու, որպէսզի հարցերը չբարդանան:
- **ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**
Օրը սահմանափակ է, երբ արժանուրը սկսած է: Իսկ անոնք, որոնք գործի վրայ են դեռ, բաւական աշխատանքներ պի-տի ունենան իրաւորներին:
- **ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**
Դիւրագրելու է, այսօր ու աշխատ, մը պիտի չզայնանալ: Այսպէսով, պիտի չկարենաճ արդիւնաւոր աշխատանք մը կատարել: Հանգստեցել:
- **ԿՈՑՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**
Օրը վստահութեամբ կրնայ ըլլալ արժէք մահուան արարա-տեանց համար, որովհետեւ սերը կ'ապրին: Չրոյց հար-ցերը լուծեցէ՛ք ձեր հարազատներով:
- **ԿԵՒԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**
Չրոյց կրնայ արժէք գիտեցել եւ զոր կամ առիթով ծախսեր մը՝ ընկ. Բորիսեան ահա՛ տեղ վերջաւորութեան կրնայ մեղմութեամբ մահուանը:
- **ԿԱՐԻԾ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**
Բնարարին մը կատարելու պիտի ստիպուի: Լուծե-լի՛ք հարցեր կան, որոնց համար Լիչ մը զիմարութեան կրնայ մահուանը: Համարեցէ՛ք հանգստութեամբ:
- **ԱՆԵՂՆԱԿՈՑ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**
Նոյեմբեր է, շատ գործեր կ'ու գէ՛լ կատարել կոչուանք: Զուստ արեւելէ՛ք ձեր գործունեւութիւնը, որպէսզի ուժա-սպառ չըլլալ:
- **ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**
Աշխատանքի մարզի մէջ կրնայ մեղմութեամբ աշխատել մը ու գիտեցնել, բայց՝ ի զիմ մեծ գոհգործութեանը, վստահութեամբ յանձն առնելով:
- **ԾՈՎԱԼՈՑԾ (21 Յունուարէն 19 Փետրուար)**
Դիմարութեան մէջ եղող գոյցերը այսօր առիթներ պի-տի ունենան գիրք վերադառնելու եւ հանելի ժամանց ու-նենալու:
- **ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**
Երբ արժանուրը մեղմութեամբ Լ. Ը. Ուշայի եղբ. ու հակեցէ՛ք ձեր աշխատանքին, որպէսզի անհանգիստ հարցերը զիմաց չգտնուի: Զգուշ եղէ՛ք մահ մարզի մէջ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՅ
1. Հայոց Կաթողիկոս՝ Երեմի Ա.	1. Վարդի կարոս:
2. Հասկեցի՝ Երան- րայ - Մարտիկեան միա- ւոր:	2. Անորոշ դերանուն - Չանակից տառեր - Նկա- րիչ Վրթանէս Արիկեանի ծննդավայրը:
3. Անձնական դերանուն - Հայաստանի գետերէն - Կէս՝ խարերայ:	3. Երկարական աստ- ւած - Անշնչացած մարմին (հակ.) - Քէն (հակ.):
4. Կրկնուած բաղա- ձայններ - Ամէնէն առաջ:	4. Թոնիլի ակը փակե- լու խցան:
5. Նեղ բացուածք - Շր- խաղող:	5. Աղամանդի իրի - Լի- բանանահայ պարախումբ:
6. Զիւականը - Ուտետ, պաշար:	6. Խանասորի արշա- ւանքին մասնակցած ասո- րին - Հանքի գիւղերէն:
7. Մօր առաջին կաթը - Իրերալաճիւրի տառեր:	7. Երկրի, տառեր:
8. Զանակից գիրք - Կաթականը - Նմանաճայն տառեր:	8. Արուերէնէն - Օձիչա- պիկ - Աղիւր:
9. Շէն - Արուերէնէն - Ջերմութիւնը գտնուող իշա- պանը:	9. Միաւոր թիւ - Տառի մը անունը - Գրաւոր կաթի- անհատ:
10. Սրբազան:	10. Հերկուած արտի- վրայ հատիկներ սփռող:

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Դ	Ս	Ս	Ե	Լ	Ի	Ե	Դ	Դ
2	Ե	Դ	Դ	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ
3	Կ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
4	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
5	Կ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
6	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
7	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
8	Ե	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
9	Լ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
10	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ

Թի 3442

ԽԱԶԲԱԻԻՆ

ԼՈՒՇՈՒՄԸ

ՄԵՐ ԿԱՄԲԸ ԱՐՏԱՅԱՅՏԵՆԸ ՄԵՐ ԲՈՒԷՆՈՎ

زینک